



ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2026Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2026Թ.

* Ներկայացված է չստուգված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա

Ակբա բանկի հարգելի բաժնետերեր, ներդրողներ,

Ակբա բանկի 2026 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքները վկայում են մեր բիզնես մոդելի հիմնարար կայունության, շուկայական դիրքերի ամրության և փոփոխվող տնտեսական պայմաններին արդյունավետորեն հարմարվելու մեր կարողության մասին: Տարվա զգուշավոր մեկնարկից հետո, երկրորդ եռամսյակում բիզնեսի աճի դինամիկան նշանակալիորեն արագացավ՝ պայմանավորված հիմնական բանկային գործունեության բարձր ցուցանիշներով, հաշվեկշիռի հավասարակշռված աճով և դիսկերի ողջամիտ կառավարմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մենք շարունակել ենք առաջ մղել մեր ռազմավարական առաջնահերթությունները բիզնեսի հիմնական ուղղություններով: Մենք խորացրել ենք մեր միջազգային ֆինանսական ինտեգրումը՝ ՎՋԵԲ-ի հետ ԵՄ երաշխիքային ծրագրերի շրջանակում կնքելով փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման դիսկերի կիսման խոշոր համաձայնագիր, ինչպես նաև ընդլայնելով գլոբալ գործարքային հնարավորությունները «The Bank of New York Mellon»-ի հետ ռազմա-

վարական գործընկերության միջոցով: Միևնույն ժամանակ, կապիտալի բավարարմակարողակը թույլ է տվել պահպանել կարգավորող մարմնի կողմից սահմանված պահանջներից հուսալիորեն բարձր բուֆերներ՝ տարեկան շահութաբաժինների վճարման միջոցով ապահովելով շարունակական արժեք մեր բաժնետերերի համար: Այս ձեռքբերումներին նպաստել են ինչպես մեր թվային էկոհամակարգի աճը, որտեղ **acba digital**-ն արդեն հաճախորդների հետ կապի հիմնական ալիքն է, այնպես էլ Բանկի խորհրդի դերի ու կառավարման ամրապնդումը՝ մեր երկարաժամկետ աճն ապահովելու նպատակով:

Հայացք նետելով 2026 թվականի երկրորդ կիսամյակին՝ մենք շարունակում ենք կենտրոնացած մնալ մեր ռազմավարական ճանապարհային քարտեզի իրագործման վրա՝ թվային հնարավորությունների ընդլայնում, գործառնական արդյունավետության օպտիմալացում և վարկային դիսկերի կարգապահ կառավարում՝ կայուն աճ ապահովելու և Հայաստանի իրական տնտեսությանը աջակցելու համար:



ՎԱՍՈՎ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Գլխավոր գործադիր տնօրեն
Ակբա Բանկ

■ ԱԿԲԱ ԲԱՆԿԸ՝ ՀԱՄԱՌՈՑ

- 2026թ. 2-րդ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ 1-ին ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հայաստանի առաջատար **ոնլիներալ բանկերից մեկը**, որի առաքելությունն է իր ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հայկական **հասարակության կայուն զարգացմանը**:

Հզոր և դիվերսիֆիկացված **ֆինանսական խումբ՝** կենսաթոշակային ֆոնդերի առաջատար կառավարիչ **Ամոնդի-Ակբա Ասեթ Մենեջմենթի** և լիզինգի շուկայի առաջատար **Ակբա Լիզինգի** հետ միասին:

Ցուցակված Հայաստանի ֆոնդային բորսայում և բաժնետերերի դիվերսիֆիկացված բազայով, ներառյալ ուժեղ ինստիտուցիոնալ գործընկերներով և բաժնետոմսերի հրապարակային ազատ շրջանառվող մասով:

Հանձնառու **կորպորատիվ կառավարման լավագույն չափանիշներին՝** հենված դիսկերի կառավարման և համապատասխանության գերազանցության վրա:

Լայն և հավատարիմ հաճախորդների բազա՝ թվային հասանելիության և ժամանակակից բանկային փորձառնության ուղեկցողական շեշտադրմամբ:

726,000+

Ակտիվ հաճախորդ

1,900+

Աշխատակիցներ

1,000,000+

Թողարված քարտ

44,500+

POS տերմինալներ

64

Մասնաճյուղեր

260+

Բանկոմատներ

94.98%

Թվայնացման մակարդակ

FitchRatings

BB- վարկանիշ

Երկարաժամկետ կայուն հեռանկարով

Moody's


Ba3 վարկանիշ

Երկարաժամկետ կայուն հեռանկարով



Acba Federation

«Ակբա Ֆեդերացիա» ՓԲԸ-ն Ակբա բանկի նշանակալի բաժնետերերն է 2017 թվականից ի վեր՝ իր 75% բաժնեմասի միջոցով ներկայացնելով ավելի քան 75,000 հայ գյուղատնտեսների: Բաժնեմասնակցությունից զատ, այն ծառայում է որպես զարգացման խթանիչ՝ վերաներդնելով ստեղծված արժեքը գյուղատնտեսության, նորարարության և համայնքների զարգացման մեջ և գյուղական միջավայրի կայունության մեջ էթիկ կառավարման և ESG լավագույն չափանիշներին համահունչ:



Proparco

Պրուպարկոն «Զարգացման ֆրանսիական գործակալություն (AFD)» խմբի դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թևը: Ակբայի բաժնետեր է 2024թ. դեկտեմբերից: Այն աջակցում է զարգացող շուկաներում կայուն տնտեսական աճին՝ երկարաժամկետ ֆինանսավորման, կապիտալ ներդրումների և բարձր ESG չափանիշներին համապատասխան տեխնիկական աջակցության միջոցով:

Ազատ շրջանառվող մաս

Բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը ներառում է շուրջ 5000 բաժնետերերի, այդ թվում՝ անհատ ներդրողների, աշխատակիցների, իրավաբանական անձանց և ներդրումային ընկերությունների, ինչպես նաև անվանատերերի: Այս դիվերսիֆիկացված բաժնետիրական բազան նպաստում է իրացվելիությանը, շուկայի տեսանելիությանը և շահակիցների լայն ներգրավվածությանը՝ միաժամանակ ամրապնդելով թափանցիկությունն ու պատշաճ կորպորատիվ կառավարումը:



ԱԿՏԻՎՆԵՐ

1,137 մլրդ ՀՀ դրամ
(\$ 3,089 մլն)

Շուկայում 3-րդը՝
8.2% մասնաբաժնով



ՎԱՐԿԵՐ

/ներառյալ լիզինգը/

810.8 մլրդ ՀՀ դրամ
(\$ 2,204 մլն)

Շուկայում 3-րդը՝
9.5% մասնաբաժնով



ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

109.1 մլրդ ՀՀ դրամ
(\$ 296.7 մլն)

Շուկայում 1-ինը



ՎԱՎԱՆԴՆԵՐ

/ներառյալ լիզինգը/

740.7 մլրդ ՀՀ դրամ
(\$ 2,013 մլն)

Շուկայում 3-րդը՝
8.3% մասնաբաժնով



ԿԱՊԻՏԱԼ

203.7 մլրդ ՀՀ դրամ
(\$ 553.6 մլն)

Շուկայում 3-րդը՝
9.2% մասնաբաժնով



ՑՈՒՑ ՇԱՀՈՒՅԹ

16.5 մլրդ ՀՀ դրամ
(\$ 45 մլն)

- Ակբան 2026թ. 1-ին կիսամյակում գրանցեց կայուն արդյունքներ հաշվեկշռի և շահութաբերության հիմնական ցուցանիշների գծով:
- Բանկը պահպանեց իր դիրքը Հայաստանի երեք խոշորագույն բանկերի շարքում՝ ըստ ակտիվների, կապիտալի, վարկերի և ավանդների:
- Ընդհանուր ակտիվները հասան **1,137 մլրդ դրամի**, իսկ համախառն վարկային պորտֆելը, ներառյալ լիզինգը, կազմեց **810.8 մլրդ դրամ**:
- Ավանդները և թողարկված պարտատոմսերը կազմեցին **740.7 մլրդ դրամ**, ինչը վկայում է եռամսյակի ընթացքում կայուն ֆինանսավորման ներգրավման մասին:
- Կապիտալն աճեց մինչև **203.7 մլրդ դրամ** ստեղծելով ամուր հիմք հետագա աճի և դիմակայունության համար:
- **16.5 մլրդ դրամ** զուտ շահույթը և լիզինգի շուկայում շարունակվող առաջատար դիրքը ընդգծում են Ակբայի բիզնես մոդելի ամրությունն ու հավասարակշռվածությունը:



ԱԿՏԻՎՆԵՐԻ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
(ROA)

3.0%

տարեկանացված



ԿԼՊԻՏԱԼԻ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
(ROE)

16.6%

տարեկանացված



1 ԲԱԺՆԵՏՈՄՈՒՆ ԲԱԺԻՆ
ԸՆԿՆՈՂ ՇԱՀՈՒՅԹ
(EPS)

5,572 <<դրամ
(15\$)

տարեկանացված



ԱՄՍԱԿԱՆ ԱԿՏԻՎ
ԹՎՅԱՅԻՆ ՕԳՏԱՏԵՐԵՐ
(DIGITAL MAU)

61%



ԾԱԽՍԵՐ/ԵԿԱՄՈՒՏԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(CIR)

42.4%



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԼՊԻՏԱԼԻ
ՀԱՄԱՐԺԵՐՈՒԹՅՈՒՆ
(CAR)

21.9%



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎՅԱՅԻՆ
ՕԳՏԱՏԵՐԵՐ

98%



ԹՎՅԱՅԻՆ ՕՐԱԿԱՆ
ԱԿՏԻՎ ՕԳՏԱՏԵՐԵՐ

61%

- 2026թ. 1-ին կիսամյակի արդյունքները շարունակեցին արտացոլիցին շարունակվող շահութաբերությունը, ուժեղ կապիտալի զգացիան և թվային բարձր ներգրավվածությունը:
- Տարեկանացված **16.6% ROE**-ն (սեփական կապիտալի շահութաբերություն) և **3% ROA**-ն (ակտիվների շահութաբերություն) վկայում են շարունակվող շահութաբերության մասին, թեև դրանք ավելի ցածր են նախորդ ավելի ուժեղ ժամանակաշրջանների մակարդակներից:
- Բանկի **22%** կապիտալի համարժեքության գործակիցը վկայում է կապիտալի ամրության և հետագա զարգացման ամուր հիմքերի մասին:
- Տարեկանացված **5,572 դրամ EPS**-ը (1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ) ցույց է տալիս, որ ավելի մեղմ պայմաններում էլ բանկը շարունակել է շահույթ գեներացնել:
- **42.4%** ծախսեր/եկամուտներ հարաբերակցությամբ Ալբան պահպանել է ողջամիտ գործառնական կարգապահություն:
- Ամսական ակտիվ օգտատերերի բարձր մակարդակն ընդգծում է թվայնացման կարևոր դերը ծառայությունների որակի և մասշտաբայնության տեսանկյունից:

ՀԱՃԱխՈՐԴՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԵՐԱԶԱՅՑ ՈՐԱԿ

Հաճախորդը մեր բոլոր գործողությունների կենտրոնում է՝ սկսած պրոդուկտի մշակումից մինչև սպասարկում և հարաբերությունների կառավարում

ԹՎԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅԱՄԲԱՆՔ ԲԱՆԿԻՆԳ

Մենք ներդրումներ ենք կատարում թվային հարթակներում, ավտոմատացման և արհեստական բանականության մեջ՝ ավելի արագ, ավելի խելացի և հասանելի բանկային ծառայություններ մատուցելու համար

ՊԱՏԱՍԽԱՆԱԿՑՈՒ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԿԻՆԳ

ESG սկզբունքներն առաջնորդում են մեր ռիսկերի կառավարումը, պրոդուկտների մշակումը և շահակիցների հետ փոխգործակցությունը

ԳՈՐԾԱՌՆԱԿԱԿՆ ԳԵՐԱԶԱՅՑՈՒԹՅՈՒՆ

Մենք իրականացնում են կառուցվածքային, տեխնոլոգիական և գործընթացային բարելավումներ՝ արդյունավետությունը, ծախսերի վերահսկողությունը և սպասարկման որակը բարձրացնելու համար

ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ԳՈՐԾԵՆԹԱՅՆԵՐ

Մենք կենտրոնանում ենք գործընթացների ամբողջական օպտիմալացման և ավտոմատացման վրա՝ արագություն, միատեսակություն և գործառնական գերազանցություն ապահովելու համար

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ



շուրջ 15%

Վարկային և ավանդային
պորտֆելների տարեկան աճ



շուրջ 20%

Կապիտալի
շահութաբերություն
(ROE)



շուրջ 40%

Շահագործման գործակից
(Ծախսեր/եկամուտներ)




740.000

Ակտիվ
հաճախորդներ 2026թ.
վերջ


- ԱԿԲԱ ԲԱՆԿԸ՝ ՀԱՄԱՌՈՏ
- **2026Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

«Հաշեկշիկի կայուն աճ» պայմանավորված կապիտալի և բիզնեսի ընդլայնմամբ:
Ակբան շարունակում է մնալ ակտիվների ծավալով առաջատար 3 բանկերի շարքում»

Ակտիվներ մլրդ ՀՀ դրամ



Պարտավորություններ և կապիտալ մլրդ ՀՀ դրամ




■ Պարտավորություններ ■ Կապիտալ

- ▶ Ակբան 2026թ. առաջին կիսամյակում ապահովել է հաշվեկշիկի շարունակական աճ. ընդհանուր ակտիվներն ավելացել են՝ հասնելով **1,136 միլիարդ ՀՀ դրամի (+7.5%)** տարվա սկզբից և **+21.2%** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):
- ▶ Հաշվեկշիկի ընդլայնումը հիմնականում պայմանավորված էր վարկավորման ծավալների աճով, որն ուղեկցվել է կապիտալ ծախսերի (CapEx) կարգապահ կառավարմամբ և հիմնական միջոցներում նախատեսված ներդրումների ժամկետների օպտիմալացմամբ:
- ▶ Ընդհանուր կապիտալը հասել է **203.7 միլիարդ ՀՀ դրամի՝** ավելի ամրապնդելով բանկի կապիտալի հիմքը: Պարտավորություններն աճել են բիզնեսի ընդհանուր աճին համա-հունչ՝ նպաստելով հաշվեկշիկի ընդլայնմանը:


- ▶ Ակբան պահպանել է իր դիրքը ակտիվների ծավալով Հայաստանի բանկային համակարգի առաջատար եղյակում:
- ▶ 2026թ. առաջին կիսամյակում գործառնական միջավայրը պահպանվել է համեմատաբար զգուշավոր, հատկապես գյուղատնտեսության և ՓՄՁ հաճախորդների որոշակի սեգմենտներում:
- ▶ Ղեկավարությունը ակնկալում է բիզնեսի աճի դինամիկայի բարելավում տարվա երկրորդ կիսամյակում՝ մոտենալով տնտեսության իրական ներուժին:

Համախառն վարկային պորտֆելը՝ ըստ բիզնես ուղղությունների մլրդ ՀՀ դրամ



■ Մանրածախ ■ ՓՄՁ և կրպորատիվ ■ Գյուղատնտեսական

Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պորտֆել մլրդ ՀՀ դրամ




- ▶ 2026թ. առաջին կիսամյակում Ակբայի համախառն վարկային պորտֆելը (ներառյալ լիզինգը) ավելացել է՝ հասնելով **810.8 միլիարդ ՀՀ դրամի**՝ նպաստելով հաշվեկշիռի շարունակական աճին:
- ▶ Ակբան պահպանել է իր առաջատար դիրքը լիզինգի շուկայում. ֆինանսական լիզինգի պորտֆելը հասել է **109.2 միլիարդ ՀՀ դրամի (+5.8%)** տարեկան աճի և **+9.4%** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):
- ▶ Վարկային պորտֆելի աճը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսական սեգմենտով, որը զգալիորեն գերազանցել է իր թիրախը: Այս ընդլայնմանը մեծապես նպաստել է Բանկի կողմից գյուղատնտեսության ոլորտում պետական սուբսիդավորման ծրագրերի ակտիվ իրականացումը:
- ▶ **56** վարկերը կազմում են սպառողական վարկավորման **2/3**-ից ավելին՝ արտացոլելով մանրածախ վարկավորման թվայնացման շարունակվող առաջընթացը:

- ▶ Վարկային կորուստների գծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված էր ռիսկերի ավելի վաղ ճանաչմամբ: Այս ռիսկերը նախապես ամբողջությամբ պլանավորված և բացահայտված են եղել՝ գտնվելով դեկավարկության վերահսկողության ներքո:
- ▶ Ընդհանուր վարկային որակը պահպանվում է վերահսկելի մակարդակում. 3-րդ խմբի (Stage 3) վարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի **2.98%**-ը, ինչն ընդգծում է ակտիվների որակի կայուն նկարագիրը:

«Հաճախորդների վստահությունը և տեղական արժույթով ֆինանսավորումը շարունակում են մնալ Ակբայի հաշվեկշռի առանցքային ուժեղ կողմերը»

Ավանդների և թողարկված պարտատոմսերի պորտֆելը՝ ըստ բիզնես ուղղությունների միլիոն ՀՀ դրամ



■ Մանրածախ ■ ՓՄՁ և կորպորատիվ ■ Գյուղատնտեսական


60.2 մլրդ ՀՀ դրամ

30.06.2026թ. դրությամբ թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը

12


Գործող տրանշների քանակը (8-ը՝ դրամային, 8-ը՝ դոլարային)

Ավանդների և թողարկված պարտատոմսերի պորտֆելի արժույթային կառուցվածքը




- ▶ Ֆինանսավորման աճը եռամսյակի ընթացքում մնաց կայուն՝ աջակցված ավելի քան **629,000** ավանդատոմսերի վստահությամբ և հավաստարմությամբ:
- ▶ Ակբայի՝ ավանդների և թողարկված պարտատոմսերի պորտֆելը 2026թ. առաջին կիսամյակում հասել է **740.7 միլիարդ ՀՀ դրամի**՝ ապահովելով ֆինանսավորման կայուն ու դիվերսիֆիկացված հենք (**+10.5%** տարվա սկզբից և **+21.8%**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) և զերազանցելով բյուջետային թիրախները: Պորտֆելի ընդլայնման հիմնական խթանը հանդիսացել է ժամկետային ավանդների աճը:
- ▶ Պարտատոմսերի պորտֆելը՝ նախորդ եռամսյակի համեմատ փոքր-ինչ՝ նվազել է, ինչը պայմանավորված էր մի քանի տրանշների մարմամբ:
- ▶ Բանկը շարունակեց օգտվել տեղական արժույթով ֆինանսավորման ուժեղ կառուցվածքից, որտեղ պորտֆելի գերակշիռ մասը ձևավորվում է դրամով ներգրավված միջոցներից:
- ▶ Ընդհանուր առմամբ, եռամսյակը վերահաստատեց Ակբայի ֆինանսավորման բազայի կայունությունը և դրա կարողությունը աջակցելու բիզնեսի հետագա աճին:


Ընդհանուր կապիտալ մլրդ ՀՀ դրամ



Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակից



Զուտ շահույթ մլրդ ՀՀ դրամ




■ Ն1 Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվ
 ■ Սահմանային մակարդակ


- ▶ Սկզբի ընդհանուր կապիտալը 2026թ. հունիսի 30-ի դրությամբ ավելացել է հասնելով **203.7 միլիարդ ՀՀ դրամի (+4.7%)** տարվա սկզբից և **+17%** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Կապիտալի ներքին կայունությունը հնարավորություն է տվել հունիսին հեշտությամբ ֆինանսավորել **7.5 միլիարդ ՀՀ դրամի** շահութաբաժինների վճարումը՝ միաժամանակ պահպանելով ամուր բուֆերներ ապագա աճի համար:
- ▶ Բանկը պահպանել է կապիտալի և ուժեղ բուֆերներ, ընդ որում՝ հիմնական նորմատիվային ցուցանիշները շարունակել են գտնվել սահմանված նվազագույն պահանջներից զգալիորեն բարձր մակարդակում:
- ▶ Կապիտալի համարժեքության ընդհանուր ցուցանիշը կազմել է **22%**, իսկ իրացվելիության ցուցանիշները շարունակել են արտացոլել հաշվեկշռի պահպանողական դիրքավորումը: Կապիտալի և իրացվելիության այս ամրությունը կարևոր պաշտպանիչ բուֆեր է ապահովում արտաքին անորոշությունների, այդ թվում՝ շարունակվող աշխարհաքաղաքական ռիսկերի դեմ:

- ▶ Հաշվետու ժամանակահատվածի զուտ շահույթը կազմել է **16.5 միլիարդ ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մնալով հիմնականում կայուն՝ չնայած ավելի մեղմ գործառնական միջավայրին:
- ▶ Սկզբի շարունակել է պահպանել ըստ էության փակ արտադրության դիրք՝ սահմանափակելով զգայունությունը արժույթային տատանումների նկատմամբ:
- ▶ Ընդհանուր առմամբ, եռամսյակը վերահաստատել է «Սկզբայի» կապիտալի ամուր հիմքը և հաշվեկշռի ողջամիտ (զգոն) կառավարումը:


Ակտիվների շահութաբերություն (ROA)



Կապիտալի շահութաբերություն (ROE)




Ծախսեր/Եկամուտներ հարաբերակցություն (CIR)



- ▶ 2026թ. 1-ին կիսամյակում շահութաբերության ցուցանիշները ավելի չափավոր էին՝ բանկային համակարգում եկամտաբերության ընդհանուր միտումներին համահունչ:
- ▶ Չուտ բանկային եկամուտները պահպանեցին իրենց կայունությունը, իսկ զուտ տոկոսային եկամուտը տարեկան կտրվածքով աճեց շուրջ **16%-ով**:
- ▶ Այրուհանդերձ, եռամսյակային շահույթի վրա ճնշում գործեցին վարկային կորստի ավելի բարձր ծախսերը:


- ▶ 2026թ. առաջին կիսամյակում արտարժույթի առևտրից զուտ եկամուտը կազմել է **3.3 մլրդ դրամ**: 2-րդ եռամսյակում գրանցված կտրուկ աճը (**+10.1%** տարեկան՝ հասնելով **2.03 մլրդ դրամի**) գրանցվել է ռուբլով գործարքների ծավալների շնորհիվ, և այն ամբողջությամբ ծածկել է 1-ին եռամսյակի համեմատաբար թույլ արդյունքները: Ընդհանուր առմամբ, արտարժույթի առևտուրը շարունակում է կազմել ընդհանուր եկամուտների շուրջ **~5%-ը**՝ պաշտպանելով Ակբայի հիմնական եկամուտները արտարժույթային տատանումներից:

Ակտիվ Հաճախորդներ և acba digital-ի օգտատերեր



■ Ընդհանուր ակտիվ հաճախորդներ — acba digital օգտատերերի մասնաբաժին
— Թվային ամսական ակտիվ օգտատերեր


Քարտերի ընդհանուր թիվը



- ▶ Ակրան 2026թ. առաջին կիսամյակում շարունակել է ընդլայնել իր հաճախորդների բազան. ակտիվ հաճախորդների թիվը հասել է **726 հազարից** ավելի՝ ի տարվա սկզբից աճելով **5%**-ով:
- ▶ Ակրան պահպանել է իր առաջատար դիրքը քարտերի թողարկման շուկայում. պորտֆելը գերազանցել է **1 միլիոն** քարտի սահմանագիծը **(+10%)** տարվա սկզբից և **+3%** նախորդ եռամսյակի համեմատ՝ մասամբ ասպարհովված կենսաթոշակային քարտերի թողարկման ընդլայնմամբ: Ընդհանուր քարտերն **16.6%**-ը **American Express** քարտերն են, որոնք Հայաստանում թողարկվում են բացառապես Ակրայի կողմից:

- ▶ Թվային ներգրավվածությունը պահպանվել է բարձր մակարդակում՝ acba digital-ի գրանցված օգտատերերի թիվը գերազանցել է **710 հազարը** (ակտիվ հաճախորդների **98%**-ը): Ամսական ակտիվ օգտատերերի (MAU) թիվը հասել է **440 հազարից** ավելի (ակտիվ հաճախորդների **61%**-ը), իսկ օրական ակտիվ օգտատերերի (DAU) թիվը կազմել է միջինում **175 հազար (24%)** վերահաստատելով հարթակի առանցքային դերը հաճախորդների ամենօրյա բանկային գործառնություններում:

Իրականացված գործարքների ընդհանուր քանակը (միլիոններով) և թվայնացման մակարդակը (ամբողջությամբ ոչ մասնաճյուղային գործարքները)




■ Իրականացված գործարքների ընդհանուր քանակ — թվայնացման մակարդակ

Ներառում է միայն բազմալիք (omni-channel) գործարքները (որոնք հնարավոր է իրականացնել թվային ալիքներով, ինքնասպասարկման տերմինալներով կամ մասնաճյուղերում):

Գործարքների ընդհանուր ծավալն ավելի բարձր է:

- ▶ Սկսած 2026թ. 2-րդ եռամսյակում շարունակել է ընդլայնել իր գործարքային ծավալները: մշակված ընդհանուր գործարքների քանակը եռամսյակի ընթացքում հասել է ավելի քան **13 միլիոն**:
- ▶ Թվային ալիքները շարունակել են մնալ հաճախորդների հիմնական ընտրությունը: Բոլոր գործարքների **95%-ն** իրականացվել է ամբողջությամբ մասնաճյուղերից դուրս:
- ▶ Բոլոր գործարքների ավելի քան **73%-ն** իրականացվել է **acba digital** հարթակի միջոցով՝ վերահաստատելով դրա առանցքային դերը հաճախորդների ամենօրյա բանկային գործառնու-

- թյուններում, այն դեպքում, երբ ինքնասպասարկման տերմինալներին բաժին է ընկել **21.6%-ը**, իսկ մասնաճյուղերին՝ ընդամենը **5%-ը**:
- ▶ Ընդհանուր առմամբ, 2026թ. առաջին կիսամյակը վերահաստատել է Սկբայի թվային ծառայու-թյունների ակտիվ օգտագործումը և ինքնասպասարկման բանկինգի շարունակական ընդլայ-նումը:



ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՒՄԱՅԼ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ 2024
International Finance Awards

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿ - ՀԱՅԱՍՏԱՆ 2025
EUROMONEY

ԱՌՕՐՅԱ ԲԱՆԿԻՆԳ

- ▶ Առցանց գրանցում, անվտանգ նույնականացում
- ▶ Փոխանցումներ և վճարումներ
- ▶ Զարտերի առցանց պատվիրում, արգելափակում և փակում

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ Լիովին թվային ավանտյների ներդրում
- ▶ Ավանդների և հաշիվների բացում ու փակում 24/7 ռեժիմով

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ

- ▶ Լիովին թվային սպառողական վարկավորում
- ▶ Նախապես հաստատված վարկային սահմանաչափեր
- ▶ Վարկերի մարումներ
- ▶ Լիզինգ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

- ▶ Առցանց ներդրումային հաշվի բացում
- ▶ Հայաստանի ֆուդային բորսայում ցուցակված արժեթղթերով առևտուր
- ▶ Արժեթղթերի հաշվի կառավարում

ԱՎԵԼԻՆ ԶԱՆ ԲԱՆԿԻՆԳ

- ▶ Chatbot
- ▶ Ապահովագրություն - ավտոմեքենայի, ճամփորդության և այլն
- ▶ Կենսաթոշկային խնայողություններին հետևել

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ

«Երևանի գինու օրեր 2026» տոմսեր. Օգտատերերը կարող էին ձեռք բերել փառատոնի տոմսեր անմիջապես հավելվածից՝ 3 փաթեթներով: acba digital-ի օգտատերերին տրամադրվել է էքսկլյուզիվ 30% զեղչ «Գինուց հաճույք» փաթեթի համար, և 20% զեղչ՝ հատուկ նվերներ ներառող նոր ներդրված «Exclusive» փաթեթի համար:

Amex Gold ապահովագրական վկայագրեր. American Express Gold հիմնական և կից ծառայություններն այժմ կարող են գեներացնել և ներբեռնել իրենց ապահովագրական վկայագրերը անմիջապես «Զարտի առավելություններ» (Card Benefits) բաժնից:

Գործարքների մանրամասների և քաղվածքների թարմացում. Բարելավվել է գործարքների պատմության էջը՝ ավելացվել է թարմացված «Արտահանել» (Export) կոճակը, «Կրկնել» (Repeat) կոճակը (Նախկինում՝ «Պատճենել»), ինչպես նաև նոր «Ուղարկել» (Share) ֆունկցիան, որը թույլ է տալիս ներբեռնել կամ ուղարկել քաղվածքները նոր նկարային ձևաչափով (image format):

«Խնդրեմ և հեռուստատեսություն» բաժնի վերանախագծում. Բաժինը թարմացվել է՝ ստանալով ինտուիտիվ ինտերֆեյս և կոմունալ վճարումների իրականացման ավելի պարզեցված գործընթաց:

Միջոցառումների տոմսերի ձեռքբերում հավելվածում («Ժամանց»). Հիմնական էլրանիս ավելացված նոր «Ժամանց» (Entertainment) բաժինը՝ tomsarkh.am-ի հետ համագործակցությամբ, հնարավորություն է տալիս օգտատերերին դիտել միջոցառումների կատեգորիաները, գնել տոմսեր և կառավարել դրանք «Իմ տոմսեր» (My Tickets) մասում:

- ԱԿԲԱ ԲԱՆԿԸ՝ ՀԱՄԱՌՈՏ
- 2026թ. 2-րդ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ 1-ին ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- **ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

«Բաժնետոմսի արժեքի աճը արտացոլում է շուկայի վստահության բարձրացումը և հետագա աճի ներուժը»

19,000 ՀՀ դրամ

2-րդ եռ. ամենաբարձր գինը
(+37% տարեկան)

17,000 ՀՀ դրամ

2-րդ եռ. ամենացածր գինը
(+22% տարեկան)

17,640 ՀՀ դրամ

2-րդ եռ. միջին գինը
(+20% տարեկան)

17,400 ՀՀ դրամ

2-րդ եռ. բացման գինը (01.04.2026)
+17% տարեկան

19,000 ՀՀ դրամ

2-րդ եռ. փակման գինը (30.06.2026)
+37% տարեկան

29.3% (2025թ. 4-րդ եռ.՝ 38.8%)

**Շահույթի
Եկամտաբերություն**

(= մեկ բաժն. բաժին ընկնող շահույթ/
շուկայական գինը)
(2026թ. 1-ին եռ.՝ 29.6%)

3.41 (2025թ. 4-րդ եռ.՝ 2.58)

Գին/շահույթ գործակից (P/E)

(=շուկայական գին/մեկ բաժն. բաժին
ընկնող շահույթ)
(2026թ. 1-ին եռ.՝ 3.38)


0.56x

**Գին/հաշվեկշռային արժեք
գործակից**

(Price-to-Book Ratio, P/B)

(=շուկայական գին/մեկ բաժնետոմսի
հաշվեկշռ. արժեք)
(2026թ. 1-ին եռ.՝ 0.53x)


Մեկ բաժնետոմսի միջին ամսական շուկայական արժեքը (ՀՀ դրամ)



34,034 ՀՀ դրամ (+25% տարեկան)

1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 30.06.2026թ. դրությամբ


1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկա (<< դրամ)



5,572 ՀՀ դրամ (-3% տարեկան)


1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը 30.06.2026թ. դրությամբ

1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի (EPS) դինամիկա, (<< դրամ)



- ▶ Ակրայի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը շարունակել է աճել՝ 2026թ. հունիսի 30-ի դրությամբ հասնելով **34,034 դրամի**։ Սա արտացոլում է բանկի հետևողական շահույթաբերությունը, կապիտալի կուտակումը և բաժնետերերի սեփական կապիտալի շարունակվող աճը։
- ▶ Տարեկանացված մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը 2026թ. 2-րդ եռամսյակի ավարտին կազմել է **5,572 դրամ**, ինչը փոքր-ինչ ցածր է նախորդ տարվա մակարդակից՝ պայմանավորված կիսամյակի համեմատաբար ավելի մեղմ շահութաբերությամբ։
- ▶ Չնայած բաժնետոմսի շուկայական գնի վերջին աճին՝ Ակրայի բաժնետոմսերը շարունակում են վաճառվել հաշվեկշռային արժեքից ցածր մակարդակում, ինչը վկայում է հետագա վերագնահատման ներուժի մասին։
- ▶ Շահութաբաժինները շարունակում են մնալ բաժնետերերին արժեք վերադարձնելու հիմնական գործիք՝ հենված բանկի կանոնավոր բաշխումների պատմության վրա։ Ժամանակի ընթացքում բաժնետերերի եկամտաբերության ներուժը կարող է ձևավորվել ինչպես շահութաբաժինների, այնպես էլ շուկայական գնահատականի աստիճանական բարելավման հաշվին։

Հայաստանի ֆոնդային բորսայում բաժնետոմսերով գործարքների ընդհանուր ծավալը (ներառյալ՝ հասցեական գործարքները) և Ակբայի մասնաբաժինը, մլրդ ՀՀ դրամ



113,7 մլրդ ՀՀ դրամ

Ակբայի շուկայական կապիտալիզացիան՝ 30.06.2026թ. դրությամբ (+37 տարեկան)

23%

Մասնաբաժինը բաժնետոմսերի շուկայի ընդհանուր կապիտալիզացիայում (30.06.2025թ.-ին՝ 18%)

24,000+

2-րդ եռամսյակում վաճառված բաժնետոմսերի քանակա՝ +180% տարեկան

388

Օրական միջինում վաճառված բաժնետոմսերի քանակ՝ +80% տարեկան

75%

Բաժնետոմսերով առևտրի ծավալների մասնաբաժինը՝ **425.5 մլն ՀՀ դրամով** +237% տարեկան

47%


Բաժնետոմսերի գործարքների* մասնաբաժինը՝ **282 գործարքով** (+117% տարեկան)
*ոչ հասցեական հայտերով գործարքների

- ▶ 2026թ. 2-ին եռամսյակում Ակբայի բաժնետոմսերով առևտուրը պահպանվել է ակտիվ՝ աջակցելով բանկի տեսանելիությանը տեղական կապիտալի շուկայում:
- ▶ Եռամսյակի ընթացքում Ակբան կազմել է AMX-ում բաժնետոմսերի շուկայի ակտիվության զգալի մասը, հատկապես ոչ հասցեական առևտրի ծավալների և գործարքների քանակի գծով:

- ▶ Առևտրի ծավալների աճը վկայում է ներդրողների շարունակվող հետաքրքրության և շուկայական ակտիվության բարելավման մասին: Օրական միջինում վաճառվող բաժնետոմսերի թվի աճը նույնպես ցույց է տալիս իրացվելիության ուժեղացում՝ նախորդ տարվա համեմատ:
- ▶ Ընդհանուր առմամբ, եռամսյակը վերահաստատեց Ակբայի ուժեղ ներկայությունը Հայաստանի ցուցակված բաժնետոմսերի շուկայում:

Շահույթի բաշխում, (մլրդ ՀՀ դրամ)

Վճարման գործակից



- Տարվա ընդհանուր զուտ շահույթը (մլրդ դրամ)
- Տարվա արդյունքներով ընդհանուր շահութաբաժին (մլրդ դրամ)
- Շահութաբաժին մեկ բաժնետոմսի համար (ՀՀ դրամ)

20%

Շահութաբաժնային քաղաքականությամբ սահմանված նվազագույն բաշխման գործակից

~ 20%

2022-2025թթ. վճարված շահութաբաժինների տարեկան միջին համակցված աճի տեմպ (CAGR)


Բաժնետերերի եկամտաբերության և ապագա աճի հավասարակշռություն

1,250 ՀՀ դրամ

1 բաժնետոմսի դիմաց շահութաբաժին,
2025 թվականի արդյունքներով
(+13.6% տարեկան)

Հաստատվել է մայիսի 27-ի բաժնետերերի
տարեկան ընդհանուր ժողովի կողմից
վճարվել է հունիսի 2-ին

Բաժնետոմսերի ընդհանուր քանակը



ՆՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



**ՍՈՆԱ
ԻՇԽԱՆՅԱՆ**
Խորհրդի Նոր Նախագահ

Սուդանի հանձնաժողովի անդամ
Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ
Կառավարման, նշանակումների և
վարձատրությունների հանձնաժողովի անդամ
Ռազմավարության հանձնաժողովի անդամ

ՆՈՐ ՎԵՐԱԿՍ



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊՈՂՈՍՅԱՆ**
Խորհրդի անդամ

Նշանակվել է հիմնական բաժնետեր Սկբա Ֆեդերացիա ՓԲԸ
կողմից՝ փոխարինելով Ռաֆայել Սարգսյանին՝ որպես Սկբա
Ֆեդերացիայի ներկայացուցիչ բանկի խորհրդի կազմում



**ԲԵՐՆԱՐԴ
ԴԸ ՎԻՏ**
Խորհրդի անկախ անդամ

Ռազմավարության հանձնաժողովի նախագահ



**ԲՐՈՒՆՈ
ՇԱՐԻԷ**
Խորհրդի անդամ

Կառավարման, նշանակումների և
վարձատրությունների հանձնաժողովի անդամ
Ռազմավարության հանձնաժողովի անդամ
Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ



**ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Խորհրդի անկախ անդամ

Սուդանի հանձնաժողովի նախագահ
Ռիսկերի կառավարման հանձնաժողովի նախագահ
Ռազմավարության հանձնաժողովի անդամ



**ԱՐԱՄ
ԲԱԲԱՅԱՆ**
Խորհրդի անդամ

Կառավարման, նշանակումների և
վարձատրությունների հանձնաժողովի անդամ
Ռազմավարության հանձնաժողովի անդամ



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՓԱԽԶԱՆՅԱՆ**
Խորհրդի անդամ

Կառավարման, նշանակումների և
վարձատրությունների հանձնաժողովի անդամ



**ԿԱՐԱՆ
ՈՒՌՈՒՏՅԱՆ**
Խորհրդի անդամ

Սուդանի հանձնաժողովի անդամ



**ԳԱՅԱՆԷ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
Խորհրդի անդամ

Ռազմավարության հանձնաժողովի անդամ

- ԱԿԲԱ ԲԱՆԿԸ՝ ՀԱՄԱՌՈՏ
- 2026Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- **ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ**
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ֆինանսավորում, բաժնետերերի եկամտաբերություն և մակրոտնտեսական միջավայր

- **100 միլիոն եվրոյի համաձայնագիր ՎՋԵԲ-ի հետ.** Ակբան Լոնդոնում մեկնարկել է նոր գործընկերություն ՎՋԵԲ-ի (EBRD) հետ՝ ուղղելով 100 միլիոն եվրո ՓՄՁ-ների աճին՝ ԵՄ EFSD+ ֆինանսական երաշխիքների շրջանակում: Ծրագիրը ներառում է ՎՋԵԲ-ի կողմից 50 միլիոն եվրոյի ռիսկերի կիսման կառուցվածք (risk-sharing), ինչը նշանակալիորեն կբարելավի վարկային միջոցների հասանելիությունը հայաստանյան բիզնեսների համար:
- **Համագործակցություն BNY Mellon-ի հետ.** Ակբան գործընկերություն է հաստատել The Bank of New York Mellon-ի հետ՝ ընդլայնելով ԱՄՆ դոլարով միջազգային փոխանցումների, ներմուծման/արտահանման ֆինանսավորման և միջազգային առևտրի հնարավորությունները կորպորատիվ հաճախորդների համար:
- **Առաջատարություն լիզինգի շուկայում.** Ակբա Լիզինգը հանդես է եկել որպես LEASING EXPO 2026-ի գլխավոր գործընկեր: Բանկն ընդլայնել է նաև թիրախային ֆինանսավորումը ՎՋԵԲ-ի «Երիտասարդները բիզնեսում» (Youth in Business) և «Կանայք բիզնեսում» (Women in Business) ծրագրերի շրջանակներում:
- **Եկամուտներ բաժնետերերին և տոկոսադրույքների նվազեցում.** Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը հաստատել է 2025թ. ֆինանսական տարվա արդյունքներով շահութաբաժինների վճարումը՝ **1,250 ՀՀ դրամ** մեկ բաժնետոմսի դիմաց, ինչպես նաև անժամկետ պարտատոմսերի թողարկումը: ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2-ի թարմացումներից հետո Ակբան թիրախային հիմունքներով **1.0%-1.5%**-ով նվազեցրել է վարկավորման տոկոսադրույքները **ՓՄՁ, Էքսպրես Բիզնես և Գյուղատնտեսական** վարկերի համապատասխան պորտֆելները համար:

Կարգավորում, տվյալների անվտանգություն և գործառնական դիմացկունություն

- **Խորհրդի և կառավարման ամրապնդում.** Հիմնական բաժնետեր Ակբա Ֆեդերացիայի որոշմամբ Հարուցություն Պողոսյանը նշանակվել է բանկի խորհրդի անդամ: Խորհրդի անկախ անդամ Սոնա Իշխանյանը (Առևտրի կոմիտեի նախկին նախագահ) ընտրվել է բանկի խորհրդի նոր նախագահ:
- **Մասնաճյուղային ցանցի օպտիմալացում.** Գործառնական արդյունավետությունը և սպասարկման որակը բարձրացնելու նպատակով Երևանի «Օպերա» մասնաճյուղը միացվել է «Սայաթ-Նովա» մասնաճյուղին, իսկ Գյումրիի «Անի» մասնաճյուղը՝ «Շիրակ» մասնաճյուղին:
- **30-ամյակ և միջազգային ճանաչում.** Ակբան նշել է իր գործունեության 30-ամյակը, աջակցել զբաղվածության ազգային նախաձեռնություններին, ինչպես նաև Ակբա Ֆեդերացիայի և Ակբա Լիզինգի հետ համատեղ Հայաստանում հյուրընկալել է հեղինակավոր «Concours Mondial de Bruxelles» մրցույթը՝ համախմբելով 400-ից ավելի միջազգային փորձագետների՝ 8,000-ից ավելի գինիներ գնահատելու համար:

Թվային տրանսֆորմացիա և տեխնոլոգիական առաջատարություն

- **Նոր կայքի թողարկում.** Ակբան գործարկել է իր նոր սերնդի կորպորատիվ կայքը (www.acba.am)՝ ժամանակակից օգտատիրոջ ինտերֆեյսով (UI) և նավիգացիայի պարզեցված համակարգով:
- **Acba Tech Meetup.** Բանկը հյուրընկալել է 250-ից ավելի առաջատար տեխնոլոգիական մասնագետներին՝ արհեստական բանականության, ինժեներիայի և թվային բանկինգի ապագայի թեմաներով խորացված տեխնիկական քննարկումների համար:
- **acba digital-ի նոր ֆունկցիաներ.** Ներդրվել են հավելվածի նոր հնարավորություններ, այդ թվում՝ «Երևանի գինու օրեր 2026»-ի տոմսերի վաճառքը (30% և 20% զեղչերով), Amex Gold ապահովագրական վկայագրերի ստացումը հավելվածում, «Ինտերնետ և հեռուստատեսություն» բաժնի վերանախագծումը, tomsarkgh.am-ի հետ համատեղ «Ժամանց» բաժինը և գործարքների անդորրագրերի ուղարկման (share) բարելավված ֆունկցիան:

Անվտանգություն, ԲՍԿ և գործառնական կայունություն

- **Աիբեռանվտանգության համակարգ.** Silicon Mountains RISE զագաթնաժողովում Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը ներկայացրել է Ակբայի 24/7 ռեժիմով գործող կիբեռանվտանգության սպառնալիքների մոնիտորինգի և կանխարգելիչ պաշտպանության առաջադեմ համակարգերը:
- **Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն.** «Ռ-5» կենտրոնի հետ համագործակցությամբ Բանկն իրականացրել է արտակարգ իրավիճակներում արձագանքման և էվակուացիայի գործնական դասընթացներ 19 մարզային մասնաճյուղերի 197 աշխատակիցների համար:
- **Օրգանական գյուղատնտեսություն 2026.** NABU-ի հետ գործընկերությամբ Ակբան մեկնարկել է «Օրգանական գյուղատնտեսության զարգացման 2026» ծրագիրը՝ հնարավորություն տալով տեղական ֆերմերներին ստանալ օրգանական սերտիֆիկացում և ընդլայնել արտահանման հնարավորությունները: Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային աջակցություն. Բանկն ակտիվորեն մասնակցել է սահմանամերձ բնակավայրերում բնակելի տների կառուցման պետական սուբսիդավորման ծրագրերին՝ մի շարք բնակավայրերում ամբողջությամբ իրացնելով հատկացված վարկային քվոտաները:

- ԱԿԲԱ ԲԱՆԿԸ՝ ՀԱՄԱՌՈՏ
- 2026Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- **ՀԱՎԵԼԿԱԾՆԵՐ**

ՎԿՏԻՎՆԵՐ	30.06.2026(չստուգված)	31.12.2025 (ստուգված)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	87,002,358	99,170,819
Պահանջներ բանկերի նկատմամբ	88,641,669	92,959,786
Ներդրումային արժեթղթեր	80,700,207	73,247,135
Հաճախորդներին տրված վարկեր	701,608,661	633,397,885
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	109,163,608	103,141,827
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	2,086,739	2,592,986
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	32,984,472	32,183,874
Այլ ակտիվներ	34,205,990	25,789,313
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԿՏԻՎՆԵՐ	1,136,523,082	1,062,519,621
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Բանկերի ավանդներ և մնացորդներ	5,142,657	5,576,560
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	680,529,401	618,517,523
Թողարկված պարտքային արժեթղթեր	60,210,649	51,798,299
Այլ փոխառություններ	151,468,223	153,177,807
Այլ պարտավորություններ	19,141,807	19,309,981
Ստորադաս վարկեր	12,408,528	13,152,984
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	932,831,234	867,959,973
ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	89,775,000	89,775,000
Էմիսիոն եկամուտ	3,811,978	3,811,978
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	-	-
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	5,272,100	5,277,052
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	653,023	579,047
Կանոնադրական ընդհանուր պահուստ	13,466,250	13,466,250
Զբաղիված շահույթ	90,712,497	81,650,321
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ	203,691,848	194,559,648
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1,136,523,082	1,062,519,621

Հազ. ՀՀ դրամ	01.01.2026-30.06.2026 չստուգված	01.01.2025-30.06.2025 չստուգված
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	53,036,694	43,889,430
Այլ տոկոսային եկամուտ	8,024,229	6,887,445
Տոկոսային ծախս	(24,961,728)	(19,615,777)
Զուտ տոկոսային եկամուտ	36,099,195	31,161,098
Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում/ (ծախս)	(5,934,954)	(1,666,079)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո	30,164,241	29,495,019
Միջնորդավճարների գծով եկամուտ	10,155,735	8,190,754
Միջնորդավճարների գծով ծախս	(5,045,988)	(4,121,514)
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	285,608	(322,448)
Զուտ օգուտ արտարժույթի աղբյուրներից	3,298,281	3,303,919
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(212,801)	613,843
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս (Արժեգրկման և պահուստների ձևավորման գծով հակադարձում)	-	-
Այլ եկամուտ	34,046	321,243
Ոչ տոկոսային եկամուտ	9,635,680	8,784,975
Անձնակազմի գծով ծախսեր	(12,372,812)	(11,173,203)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,448,893)	(1,946,493)
Այլ գործառնական ծախսեր	(1,629,380)	(1,404,548)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,944,508)	(2,593,895)
Ոչ տոկոսային ծախս	(19,395,593)	(17,118,139)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	20,404,328	21,161,854
Շահութահարկի գծով ծախս	(3,865,721)	(3,953,438)
Հաշվետու տարվա շահույթ	16,538,607	17,208,416

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Սկբա բանկ ԲԲԸ (այսուհետ՝ «Սկբա» կամ «Բանկ») կողմից բացառապես գործող և պրոենցիալ բաժնետերերի, ֆինանսական վերլուծաբանների և այլ շահագրգիռ անձանց համար՝ ընդհանուր տեղեկատվական նպատակներով: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում, չի պարունակում և մաս չի կազմում Բանկի որևէ արժեթուղթ գնելու, բաժնետիրագրվելու, ձեռք բերելու կամ օտարելու հրավերի, առաջարկի, հայտի կամ հանձնարարականի, ինչպես նաև դրա որևէ մաս չպետք է հիմք հանդիսանա կամ հիմք ընդունվի որևէ պայմանագրի կնքման կամ ներդրումային որոշման կայացման հետ կապված: Սկբան որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում սույն փաստաթղթի կամ դրա բովանդակության օգտագործման հետևանքով առաջացած որևէ ուղղակի, անուղղակի կամ ածանցյալ կորուստների համար:

Ապագային միտված հայտարարություններ և տարեկանացված ցուցանիշներ.

Սույն հաշվետվությունը պարունակում է ապագային միտված հայտարարություններ, այդ թվում՝ գնահատականներ, աճի թիրախներ, ռազմավարական առաջնահերթություններ և տարեկանացված գործունեության ցուցանիշներ (ինչպիսիք են տարեկանացված ROE-ն, ROA-ն և EPS-ը): Այս հայտարարություններն արտացոլում են ղեկավարության ընթացիկ տեսակետները, ենթադրությունները և ակնկալիքները ապագա գործառնական արդյունքներ, տնտեսական պայմանների և բիզնես միտումների վերաբերյալ: Ապագային միտված հայտարարություններն ու տարեկանացված ցուցանիշներն իրենց էությամբ ենթակա են էական բիզնես, տնտեսական, աշխարհաքաղաքական և շուկայական ռիսկերի ու անորոշությունների, որոնցից շատերը դուրս են Սկբայի վերահսկողությունից: Փաստացի արդյունքները կարող են էական տարբերվել արտահայտված, ենթադրվող կամ կանխատեսված արդյունքներից: Տարեկանացված ցուցանիշները ներկայացված են բացառապես զուտ ցուցադրական և համեմատական նպատակներով և չեն հանդիսանում ամբողջ տարվա շահույթի կանխատեսում կամ ղեկավարության ուղենիշ:

Արտարժույթի փոխարժեքներ և աճի հաշվարկ.

Համեմատական վերլուծություններում արտարժույթի փոխարկման ազդեցությունը բացառելու նպատակով՝ հաշվեկշռային և եկամտային հոդվածների՝ եռամսյակը եռամսյակի նկատմամբ (QoQ) և տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը (YTD) աճի տեսկերը հաշվարկվել են համապատասխանաբար 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքներով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (YoY) աճի տեսկերը հաշվարկվել են 2025թ. հունիսի 30-ի դրությամբ գործող համապատասխան փոխարժեքներով:

Ֆինանսական տեղեկատվություն և չստուգված (աուդիտի կողմից հաստատված չլինելու) լինելու մասին ծանուցում.

Սույն փաստաթղթում ներառված է ֆինանսական ցուցանիշները բխում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (IFRS) համապատասխան պատրաստված՝ Բանկի աուդիտի չենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից և 2026թ. հունիսի 30-ի դրությամբ ու այդ ամսաթվով ավարտված ժամանակաշրջանի համար ներքին կառավարչական հաշվառման տվյալներից: Աուդիտի կողմից չհաստատված կառավարչական հաշվառման տվյալները որոշակի առումներով կարող են տարբերվել ամբողջությամբ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվություններից: Սույն փաստաթղթում ներառված որոշ թվային ցուցանիշներ և տվյալներ ենթարկվել են կլորացման ճշգրտումների, հետևաբար՝ աղյուսակներում բերված ընդհանուր գումարները կարող են ճշգրտորեն չհամընկնել նախորդող թվերի թվաբանական գումարին:

Սկբան հիմնվում է հավաստի համարվող աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա, սակայն չի երաշխավորում դրա ճշգրտությունը կամ ամբողջականությունը: Բանկը որևէ պարտավորություն չի ստանձնում հանրայնորեն թարմացնելու, փոփոխելու կամ վերանայելու սույն փաստաթղթում պարունակվող որևէ ապագային միտված հայտարարություն կամ տեղեկատվություն՝ արտացոլելու համար սույն փաստաթղթի ամսաթվից հետո ծագող իրադարձությունները կամ հանգամանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է գործող օրենսդրությամբ կամ կանոնակարգերով:



«Կայուն աճ, բարձր շահութաբերություն, ուժեղ կառավարում: Ակբա բանկը լավ դիրքավորված է՝ այսօր արժեք ստեղծելու և ապագայի համար ավելի մեծ հնարավորություններ կառուցելու համար»

Գրանցման հասցե՝

ՀՀ, ք. Երևան, 0002, Արամի փ. 82-84

ԿՈՆՏԱԿՏԱՑԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

Ներդրողների հետ հարաբերությունների բաժին

Հեռ.՝ +374 10 318888 /8129/; +374 94 700 681

E-mail: ir@acba.am

www.acba.am